**Ձև N 5.5.1**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 223**

*հերթական համարը*

*Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի ենթակետի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքը (Արամուս բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

| Մարզ, համայնքը, բնակավայրը Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը | Փոփոխությունից հետո հարկայնությունը/հապավումն ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը) |
|---|---|---|
| ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնք (Արամուս բնակավայր)<br><br>07-013-0139-0069 կադաստրային ծածկագրով 0.04 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող | 07-013-0139-0069 կադաստրային ծածկագրով 0.04 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի | Համաձայն Կոտայք-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի |

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող* | | |
| | | **Դ.Գրիգորյան** |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | **Լ. Առաքելյան** |

Երևան, «29» «մայիսի» 2026թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գրությամբ ներկայացված պայմանը (կցվում է):

4. Աբովյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Արամուս բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի (Արամուս բնակավայրը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները: